ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՇԱԿԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ



Առողջության ապահովագրության վերաբերյալ ամենակարևոր հարցերն ու պատասխանները. հարցազրույց

06



ՋՊՄԿ-ն հրապարակել է Կայուն զարգացման 5-րդ հաշվետվությունը:

04



Ալեն Գևորգյանն ապագա տնտեսագետ է. սովորում է Երևանի պետական համալսարանում, բայց փորձում է բաց չթողնել նաև շախմատային մրցաշարերը:

09

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ZCMC
ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՇԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

№62
2026թ

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR ԿՈԴԸ՝ ԲԵՌՆԻՐ №62 ԱՄՍԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ



Ջրի խնայողության հնարավորություն. ՋՊՄԿ-ում փորձարկվում է մասնակի շրջանառու նոր խտացուցիչը

10

ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ «MINING ARMENIA FORUM 2026»-Ը՝

ՀԱՄԱԽՄԲԵԼՈՎ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՆ

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **միջոցառման մասին տեսանյութը**

Հոկտեմբերի 16–17-ին Ծաղկաձորում երրորդ անգամ անցկացվեց «Mining Armenia Forum»-ը՝ «Ռեսուրսներից դեպի հնարավորություններ» խորագրի ներքո: Երկօրյա միջազգային ֆորումը մեկ հարթակում համախմբեց հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների, պետական պաշտոնյաների, ներդրողների, միջազգային փորձագետների, ֆինանսական հաստատությունների, գիտական շրջանակների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների:

Այս տարի ֆորումին մասնակցեցին ավելի քան 350 պատվիրակներ աշխարհի 15 երկրներից, ինչպես նաև հանքարդյունաբերության և հարակից ոլորտների շուրջ 50 բանախոսներ: Միջոցառումը դարձավ ոլորտի զարգացման հեռանկարները, ներդրումային հնարավորությունները, առկա մարտահրավերներն ու միջազգային համագործակցության նոր ուղղությունները քննարկելու կարևոր հարթակ:

Երկօրյա քննարկումների առանցքում էին Հայաստանի երկրաբանական և հետախուզական ներուժը, հանքարդյունաբերության ներդրումային գրավչությունը, միջազգային ֆինանսավորման հնարավորությունները, նոր տեխնոլոգիաների կիրառումը, ավտոմատացումն ու արտադրական արդյունավետությունը, ինչպես նաև կայուն զարգացումը, կենսաբազմազանության պահպանումը և համայնքների հետ համագործակցությունը:



Ֆորումի երկրորդ օրվա աշխատանքներին մասնակցեց նաև **ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:** Կառավարության ղեկավարը ելույթում կարևորեց հանքարդյունաբերության նշանակությունը Հայաստանի տնտեսության, ՀՆԱ-ի և արտահանման ծավալների ձևավորման գործում: Վարչապետն ընդգծեց ոլորտում առկա հնարավորությունների և մարտահրավերների շուրջ կառավարության ու մասնավոր հատվածի միջև բաց և թափանցիկ երկխոսության անհրաժեշտությունը: «Երկխոսության համար լավ հարթակ է»,- նշեց Նիկոլ Փաշինյանը՝ կարևորելով ֆորումի դերը ոլորտի խնդիրների և դրանց լուծման հնարավորությունների քննարկման գործում:

Վարչապետն անդրադարձավ նաև Հայաստանում հանքարդյունաբերության բնապահպանական չափանիշների բարձրացման անհրաժեշտությանը՝ ընդգծելով, որ ոլորտի հետագա զարգացումը պետք է համահունչ լինի միջազգային բարձր չափանիշներին և շրջակա միջավայրի պահպանության ժամանակակից պահանջներին:

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն իր ելույթում անդրադարձավ համաշխարհային տնտեսությունում հանքարդյունաբերության փոփոխվող դերին և հանքային ռեսուրսների նկատմամբ աճող պահանջարկին: Նա ընդգծեց, որ Հայաստանի հանքարդյունաբերության խնդիրը պարզապես ավելի շատ հանքաքար արդյունահանելը չէ, այլ որակապես նոր հանքարդյունաբերություն ձևավորելը:

Ֆորումի ընթացքում Հայաստանի հանքարդյունաբերության



զարգացման հեռանկարներին, ոլորտի ներուժին և ներդրումային միջավայրին անդրադարձավ նաև **Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:**

Նրա գնահատմամբ՝ Հայաստանի հանքարդյունաբերության ներուժը դեռևս ամբողջությամբ իրացված չէ, և ոլորտի հետագա առաջընթացի համար անհրաժեշտ են համակարգային փոփոխություններ, առաջին հերթին՝ երկրաբանական հետազոտությունների ակտիվացման և ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ:

«Առանց որոնողական երկրաբանության և հանքահումքային բազայի վերարտադրության՝ հնարավոր չէ հետագա զարգացումը. սա հիմքերի հիմքն է». Ռոման Խուդոլի:

Նրա խոսքով՝ նոր հանքավայրերի հայտնաբերման և հանքահումքային բազայի զարգացման համար անհրաժեշտ են հստակ օրենսդրական կարգավորումներ, ներդրողների իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներ և պետության ու մասնավոր հատվածի միջև փոխադարձ պատասխանատվության վրա հիմնված համագործակցություն:

Խուդոլին նաև կարևորեց տնտեսական զարգացման և կայունության սկզբունքների համատեղ դիտարկումը՝ շեշտելով, որ բնապահպանական, ներդրումային և արտադրական մարտահրավերները փոխկապակցված են և պահանջում են համալիր լուծումներ:



Mining Armenia Forum 2026-ի շրջանակում երկրաբանահետախուզական ոլորտի առկա խնդիրներին նվիրված՝ հրավիրյալ բանախոսների հետ քննարկման ընթացքում հարցեր է բարձրացրել **ՀՊՄԿ-ի տեխնիկական տնօրեն Արման Վարդանյանը:**

Մասնավորապես, նա հետաքրքրվել է կրտսեր հանքարդյունաբերական ընկերությունների (junior mining companies) կողմից երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման առկա մեխանիզմներով:



Հանքարդյունաբերության զարգացման և բնապահպանական պատասխանատվության համադրման կարևորությունն ընդգծեց նաև Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ, **ՀՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը:**

Նրա գնահատմամբ՝ Հայաստանը պետք է ունենա զարգացող և մրցունակ հանքարդյունաբերություն, որը միաժամանակ կհամապատասխանի հասարակության ակնկալիքներին և կապահովի հնարավորինս նվազագույն ազդեցություն բնության ու հարակից համայնքների վրա:

Ջհանյանը կարևորեց կայուն զարգացման միջազգային լավագույն չափանիշների ներդրումը՝ որպես ոլորտի երկարաժամկետ մրցունակության և հանրային վստահության ամրապնդման կարևոր նախապայման:



Այս թեմային անդրադարձավ **ՀՊՄԿ գլխավոր տնօրենի տեղակալ, կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը՝** մասնակցելով «ESG ցուցանիշներից՝ դեպի ներդրումային վստահություն» պանելային քննարկմանը:

«Մենք ուզում ենք տեսնել կայունություն բիզնեսում և թողնել մեզանից հետո լավ ժառանգություն»,– նշեց Արմեն Ստեփանյանը՝ ընդգծելով, որ կայուն զարգացումը ընկերության գործունեության առանցքային նպատակներից է:

Միջազգային համագործակցության տեսանկյունից ֆորումին կարևոր մասնակցություն ունեցան Wood Mackenzie-ն, S&P Global Energy-ն և Resourcing Tomorrow-ը: Նրանց մասնակցությամբ քննարկվեցին հանքարդյունաբերական նախագծերի ֆինանսավորման, միջազգային ներդրումների ներգրավման, շուկայի հնարավորությունների և կայուն զարգացման չափանիշների հետ կապված հարցեր:

Ֆորումի շրջանակում տեղի ունեցավ ոլորտի ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված կարևոր իրադարձություն: Հոկտեմբերի 17-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության միջև փոխանակվեցին լեռնամետալուրգիական ոլորտի վերլուծական կենտրոնի ստեղծման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրված օրինակները:

2026 թվականի ֆորումն առանձնացավ նորարարական տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ:



Ընկերության տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ Արտյոմ Պետրոսյանի նախաձեռնությամբ և առաջարկով արհեստական բանականությամբ ստեղծված «Մինաս» վերլուծական համակարգն ամփոփեց ֆորումը: Նման տեխնոլոգիաների կիրառումը կարևոր քայլ է մասնագիտական գիտելիքի համակարգման, տեղեկատվության վերլուծության և ոլորտային քննարկումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ֆորումի օրակարգում առանձնահատուկ տեղ զբաղեցրեց նաև կենսաբազմազանության պահպանության թեման: Այս համատեքստում տեղի ունեցավ Ջոն Հոբսի անվան կենսաբազմազանության պահպանության մրցանակաբաշխության արարողությունը: Նախաձեռնության նպատակն է խրախուսել կենսաբազմազանության պահպանությանն ուղղված ծրագրերն ու պատասխանատու բնօգտագործման մոտեցումները:

«Mining Armenia Forum 2026»-ը կազմակերպել էին «Հանքարդյունաբերական ֆորում» զարգացման հիմնադրամը և Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիան:

ՋՊՄԿ-Ն ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 5-ՐԴ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հինգերորդ տարին անընդմեջ հրապարակում է իր Կայուն զարգացման հաշվետվությունը: Սա պարզապես կորպորատիվ հերթական փաստաթուղթ չէ, այլ ռազմավարական կառավարման գործիք, որը համակարգված կերպով ներկայացնում է Հայաստանի գլխավոր արդյունաբերական ընկերության հզորությունը, սոցիալական ու բնապահպանական կառավարման նորագույն ստանդարտներն ու առկա բոլոր մարտահրավերները:



Ինչու է կարևոր հաշվետվության հրապարակումը

Կայուն զարգացումը շարունակական ճանապարհ է, որտեղ միջազգային չափանիշներն ու հանրային ակնկալիքները մշտապես փոխվում են՝ զեկույցի ներկայացման ընթացքում ընդգծել է ՋՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:



«Մեր նպատակն է կառուցել ժամանակակից հանքարդյունաբերական ընկերություն, որը կարող է մրցունակ լինել գլոբալ ոլորտում՝ միաժամանակ համապատասխանելով բնապահպանության, անվտանգության, սոցիալական պատասխանատվության, կորպորատիվ կառավարման և թափանցիկության ամենաբարձր պահանջներին: Կայուն զարգացումը չափվում է նրանով, թե որքանով են այս սկզբունքները դառնում արտադրությունում ամենօրյա որոշումների անբաժանելի մաս»:

2025 թվականի զեկույցի առանցքային նորարարությունները

2025 թվականն ամփոփող հաշվետվությունը նշանավորվում է միջազգային ամենաառաջադեմ գործիքների ներդրմամբ, որոնք Հայաստանի կորպորատիվ իրականությունում կիրառվում են առաջին անգամ:

TNFD գնահատում (Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խումբ). ՋՊՄԿ-ն առաջին ընկերությունն է Հայաստանում, որն իրականացրել է բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների այս գնահատումը՝ մանրամասնորեն վերլուծելով բնական էկոհամակարգերից փոխկախվածություններն ու ռիսկերը:

DMA (Կրկնակի էականության գնահատում). գնահատման նորագույն մոդել, որը հնարավորություն է տալիս կայուն զարգացման հարցերը դիտարկել երկկողմանի՝ ինչպե՞ս են կլիմայական գործոններն ազդում ընկերության գործունեության վրա, և հակառակը՝ ինչպիսի՞ ուղղակի ազդեցություն ունի ընկերությունը շրջակա միջավայրի ու համայնքների վրա:

«Այս նոր շրջանակը և ստանդարտը, որն առաջին անգամ կիրառվեց Հայաստանում, աշխարհում ևս նոր է. այն ընդամենը 3-4 տարվա պատմություն ունի: Սակայն այս կարճ ժամանակահատվածում այն արդեն լայն տարածում է ստացել շուրջ 730 գլոբալ կազմակերպությունների շրջանում, որոնցից 480-ը խոշոր են, իսկ 18-ը՝ հանքարդյունաբերական կազմակերպություններ»,- նորարարությունների բացառիկ նշանակությունն ու միջազգային կշիռն այսպես է բացատրում ՋՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը:

ԶՊՄԿ ձեռքբերումները թվերի լեզվով

2025-ին ընկերությունը վերամշակել է 22.6 մլն տոննա հանքաքար՝ պղնձի խտանյութի արտադրությունն ավելացնելով 12%-ով՝ շուրջ 204 հազար տոննա: Այս ծավալներն ուղղակիորեն սնուցում են երկրի տնտեսությունը. 359 մլն դոլարի գնումների մոտ 77%-ն ուղղվել է հայաստանյան 867 ընկերություններին, իսկ մուլտիպլիկատիվ էֆֆեկտով հարակից ոլորտներում պահպանվել է շուրջ 20 հազար աշխատատեղ: Այս շղթայի հիմքում մարդն է: Ավելի քան 4800 աշխատակիցների 89%-ը տեղացիներ են, նրանց միջին աշխատավարձը շուրջ 13 անգամ գերազանցում է հանրապետության նվազագույն աշխատավարձի չեմը: Կոմբինատից դուրս ևս պատասխանատվությունը չափելի է. սոցիալական ծրագրերին հատկացվել է 18.2 մլն դոլար, իսկ շինարարության ժամանակ գտնված մ.թ.ա. 7–6-րդ դարերի հնագույն դամբարանադաշտի բացառիկ արժեքները փրկվել ու հանձնվել են թանգարանային պահպանության: Բնականաբար, արտադրական աճն ուղեկցվում է բնապահպանական ծանրաբեռնվածությամբ. ռեկուլտիվացվել է շուրջ 43 հեկտար տարածք, մշակվել է մինչև 2040 թ. կլիմայական ռազմավարություն, իսկ ջրային տնտեսության նոր նախագծերով նախանշվել է թարմ ջրառի մինչև 30% կրճատում՝ ապացուցելով, որ կոմբինատն անցնում է հաշվետու ու ժամանակակից կորպորատիվ մշակույթի:


- ✓ **22.6 մլն** տոննա հանքաքար
- ✓ Պղնձի խտանյութի արտադրության մոտ **12%** ավելացում
- ✓ Մոտ **276 մլն** դոլարի գնումներ
- ✓ Հայաստանյան **867** ընկերություններից **4800** աշխատակից, որոնց աշխատավարձը շուրջ **13** անգամ գերազանցում է ՀՀ նվազագույն աշխատավարձի չեմը
- ✓ **18.2 մլն** դոլար հատկացված սոցիալական ծրագրերին
- ✓ Ռեկուլտիվացվել է **43** հեկտար տարածք
- ✓ Նախանշվել է ջրառի մինչև **30%** կրճատում

Գիտություն և արդյունաբերություն. ինստիտուցիոնալ կապ Պոլիտեխնիկի հետ


Կայուն զարգացման հաշվետվության շնորհանդեսը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում ընդգծել է ընկերության հաստատակամությունը՝ ինժեներական կրթության և արդյունաբերության կապն ամրապնդելու հարցում:

Միջոցառման ընթացքում ստորագրվել է ինստիտուցիոնալ համագործակցության հուշագիր: Սրա գործնական արդյունքը լինելու է ոչ միայն ուսանողների պրակտիկան ու լավագույնների ներգրավումը, այլև բացառիկ նախադեպ. ԶՊՄԿ-ն իր փորձառությամբ աջակցելու է Պոլիտեխնիկին՝ մշակելու և հրապարակելու Հայաստանում կայուն զարգացման բուհական առաջին հաշվետվությունը:

ԶՊՄԿ 2025 թ. Կայուն զարգացման զեկույցը փաստում է, որ ներդնելով միջազգային առաջադեմ ESG գործիքներ, գիտակցված պատասխանատվություն կրելով համայնքների և շրջակա միջավայրի առջև՝ ընկերությունը հաստատում է պատասխանատու, տեխնոլոգիական և ժամանակակից հանքարդյունաբերության նոր որակը Հայաստանում:



ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ



ԶՊՄԿ աշխատակիցների առողջության ապահովագրության պայմաններում փոփոխություններ են կատարվել: Նոր համակարգում առանձնահատուկ կարևորություն է ստացել առաջնային բուժօգնության օղակը, միաժամանակ ընդլայնվել են մի շարք ծառայությունների ծավալներն ու փոխհատուցման սահմանաչափերը: Նոր ապահովագրական ընկերությունը «Արմենիա Ինշուրանս»-ն է, իսկ ԶՊՄԿ աշխատակիցների համար նախատեսված է առանձին սպասարկում:

Անհրաժեշտ հեռախոսահամարներ.
ԶՊՄԿ բարեգործական հիմնադրամի առողջապահության գրասենյակ՝ ----- 041 103 301
«Արմենիա Ինշուրանս»՝ ---------- 011 57 04 04

*Ինչ պետք է իմանա աշխատակիցը բժշկական օգնության դիմելիս, ո՞ր դեպքերում է անհրաժեշտ ուղեգիր, ի՞նչ նոր ծառայություններ են ներառվել ապահովագրական փաթեթում, և ո՞ւմ դիմել հարցերի դեպքում. **զրուցել ենք ԶՊՄԿ բարեգործական հիմնադրամի առողջապահության գրասենյակի ղեկավար Պերճուհի Պողոսյանի հետ:***

- Ո՞րն է ամենակարևոր փոփոխությունը, որի մասին աշխատակիցները պետք է իմանան:

- Ամենակարևոր փոփոխությունն այն է, որ բուժօգնություն ստանալու գործընթացը պետք է սկսել առաջնային օղակից՝ պոլիկլինիկայից: Բոլորը նախ պետք է այց գրանցեն ընտանեկան բժշկի մոտ:

Հասկանում եմ, որ սկզբնական շրջանում սա կարող է որոշակի շփոթություն կամ դժգոհություն առաջացնել, սակայն համակարգի տրամաբանությունն այն է, որ առողջական խնդրի դեպքում առաջին դիմումը պետք է լինի պոլիկլինիկայում:
Եթե հետագայում անհրաժեշտ է նեղ մասնագետի խորհրդատվություն, հետազոտություն կամ այլ բուժօգնություն, բժիշկը տրամադրում է համապատասխան ուղեգիր: Դրանից հետո աշխատակիցը կարող է դիմել այն բուժհաստատություններին, որոնք սպասարկում են առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում: Այսինքն՝ կարևոր է, որ աշխատակիցները ցանկացած առողջական խնդրի դեպքում գործընթացը սկսեն ընտանեկան բժշկից:

- Արդյոք աշխատակիցը պարտադիր պետք է հետագա բուժումը ստանա այն նույն բուժհաստատությունում, որտեղ դիմել է ընտանեկան բժշկին:


- Ո՛չ: Պոլիկլինիկա դիմելը չի նշանակում, որ հետագա ամբողջ բուժումը պարտադիր պետք է իրականացվի նույն բուժհաստատությունում:
Եթե ընտանեկան բժիշկը նշանակում է հետազոտություն կամ տալիս է համապատասխան ուղեգիր, աշխատակիցը կարող է դիմել համապարփակ ապահովագրության շրջանակում սպասարկող ցանկացած բուժհաստատություն: Նույնը վերաբերում է նաև լաբորատոր հետազոտություններին. համապատասխան ուղեգրի առկայության դեպքում, դրանք կարելի է կատարել սպասարկող բոլոր լաբորատորիայում:
Պարզապես առաջին քայլը պետք է ճիշտ կատարել՝ դիմել ընտանեկան բժշկին:

- Իսկ եթե առողջական խնդիրը հրատապ է, և հնարավոր չէ սպասել ընտանեկան բժշկի ընդունելությանը, ի՞նչ անել այդ դեպքում:

- Եթե խնդիրը հրատապ է, ցանկացած բուժհաստատություն ունի անհետաձգելի բուժօգնություն տրամադրելու հնարավորություն: Անհետաձգելի դեպքի պարագայում, բնականաբար, չպետք է սպասել հերթագրման կամ ընտանեկան բժշկի ընդունելությանը:
Համապարփակ ապահովագրության շրջանակում տարեկան 8 անգամ հնարավոր է անվճար շտապօգնության կանչ գրանցել: Անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել նաև հիվանդանոցի առաջնային կամ անհետաձգելի բուժօգնության ծառայությանը:
Բացի այդ, ԶՊՄԿ առողջության կամավոր ապահովագության ծրագրով նախատեսված են առաջնային խորհրդատվություններ, որոնցից աշխատակիցը կարող է օգտվել՝ անհրաժեշտության դեպքում: Սակայն եթե հետագայում նշանակվում են հետազոտություններ կամ անալիզներ, արդեն անհրաժեշտ է անցնել առաջնային օղակով և ունենալ համապատասխան ուղեգիր:
Ամեն դեպքում, հորդորում եմ առաջնային խորհրդատվության հնավորությանը դիմել այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում երկրորդ բժշկի կարծիք:

- Արդյոք այս փոփոխությանը զուգահեռ աշխատակիցների համար նախատեսվա՞ծ են նոր առավելություններ:

- Այո՛, և սա շատ կարևոր է ընդգծել: Մի կողմից փոխվել է բուժօգնության դիմելու ընթացակարգը, բայց մյուս կողմից աշխատակիցների համար մի շարք դրական փոփոխություններ են կատարվել: Ընդլայնվել են ատամնաբուժության և ակնաբուժության համար նախատեսված ծառայությունների ծավալները, ավելացել են սահմանաչափերը: Բարձրացվել է նաև ուռուցքաբանական ծառայությունների սահմանաչափը:



Արդեն կարելի է դիմել նաև վերականգնողական բուժման, ֆիզիոթերապիայի և հարվածալիքային բուժման: Այս ծառայությունները հատկապես կարևոր են այն աշխատակիցների համար, որոնց գործի բնույթը նստակյաց է:

Այսինքն՝ փոփոխությունները միայն դիմելու նոր կարգին չեն վերաբերում: Միաժամանակ ընդլայնվել են աշխատակիցներին հասանելի մի շարք ծառայություններ:

- Ի՞նչ է փոխվել ստացիոնար բուժման դեպքում:

- Այստեղ նույնպես աշխատակցի համար կարևոր առավելություն կա: Եթե նախկինում հիվանդասենյակի հետ կապված փոխհատուցման համար անհրաժեշտ էր, որ դեպքը պարտադիր ապահովագրական ճանաչվեր, այժմ այդ սահմանափակումը հանվել է:

Եթե աշխատակիցը գտնվում է վճարովի հիվանդասենյակում, ապահովագրական ընկերությունը օրական 20 հազար դրամի չափով փոխհատուցում է հիվանդասենյակի ծախսը՝ անկախ նրանից, թե ինչ պատճառով է նա այնտեղ գտնվում: Սա ևս կարևոր փոփոխություն է, որն աշխատակցին լրացուցիչ աջակցություն է տալիս ստացիոնար բուժման ընթացքում:

- Եթե աշխատակիցն ուզում է ավելի արագ մասնագետի դիմել և չի ցանկանում սպասել ընտանեկան բժշկի հերթին, կարո՞ղ է օգտվել ապահովագրությունից:

- Ապահովագրական փաթեթում նախատեսված է յուրաքանչյուր նեղ մասնագետի մոտ առաջնային խորհրդատվություն, օրինակ՝ մեկ այց թոքաբանի մոտ, մեկ այց սրտաբանի մոտ և այդպես շարունակ: Սակայն պետք է հաշվի առնել, որ դրանց քանակը սահմանափակ է՝ տարեկան մեկ անգամ:

Եթե այդ խորհրդատվությունից հետո նշանակվում են լրացուցիչ հետազոտություններ կամ անալիզներ, հետագա գործընթացը, միևնույն է, պետք է կազմակերպվի պոլիկլինիկայի միջոցով:

Այդ պատճառով աշխատակցի համար առավել ճիշտ և արդյունավետ տարբերակը հենց սկզբից ընտանեկան բժշկին դիմելն է: Դա նաև օգնում է հետագայում խուսափել ավելորդ վճարումներից:

Միաժամանակ նշեմ, որ տարեկան մեկ անգամ էլ աշխատակիցը և նրա ընտանիքի անդամը կարող են կամավոր ապահովագրության շրջանակում անցնել կանխարգելիչ բուժզննում, ինչը շատ կարևոր է, և բոլորին հորդորում եմ օգտվել այս ծառայությունից:

- Փոխվե՞լ է արդյոք առողջապահության գրասենյակի դերը: Աշխատակիցները կարո՞ղ են նախկինի պես՝ ձեզ դիմել:

- ԶՊՄԿ հիմնադրամին դիմելու կարգը էականորեն չի փոխվել: Փոխվել են հիմնականում ֆինանսավորման որոշ ուղղություններ:

Այս փուլում մենք ֆինանսավորելու ենք արտամարմնային բեղմնավորման ծրագրերը և աջակցելու ենք ուռուցքաբանական հիվանդություններ ունեցող աշխատակիցներին:

Բայց տեղեկատվական և ուղղորդող գործառույթը պահպանվում է ամբողջությամբ: Առողջական խնդրի հետ կապված ցանկացած հարցի դեպքում աշխատակիցները կարող են դիմել մեզ:Այս առումով մեր գրասենյակը շարունակում է մնալ աշխատակիցների համար խորհրդատվության և ուղղորդման հասանելի օղակ:

Մեր հատուկ պահանջով ապահովագրական ընկերությունը ԶՊՄԿ աշխատակիցների սպասարկման համար առանձնացրել է երեք բժիշկ, որոնք բացառապես սպասարկելու են մեր աշխատակիցներին:

Տրամադրվել է նաև առանձին հեռախոսահամար՝ **011 57 04 04,** որով աշխատակիցները կարող են կապ հաստատել ապահովագրական ընկերության հետ:

Սա կարևոր է, որովհետև առանձին սպասարկման համակարգը պետք է հնարավորություն տա ավելի արագ արձագանքել աշխատակիցների հարցերին և կազմակերպել անհրաժեշտ ծառայությունները:

- Ապահովագրության համար աշխատակիցը լրացուցիչ վճար կատարո՞ւմ է:

- Մեր կողմից ձեռք բերված կամավոր ապահովագրության մասով աշխատակիցը որևէ լրացուցիչ վճար չի կատարում:

Ինչպես նախկինում՝ աշխատակցի և նրա ընտանիքի անդամի կամավոր ապահովագրության համար վճարում է ընկերությունը, իսկ համապարփակ առողջապահական ապահովագրության պետական բաղադրիչի վճարումները կատարվում են աշխատավարձից՝ սահմանված կարգով:

- Ո՞րն է ամենակարևոր ուղերձը, որը կցանկանաք փոխանցել աշխատակիցներին:


- Ամենակարևոր ուղերձը մեկն է՝ ցանկացած առողջական հարց պետք է սկսել պոլիկլինիկայից՝ ընտանեկան բժշկից:
Ուզում ենք, որ այս տեղեկությունը հասնի բոլոր աշխատակիցներին, որովհետև նոր համակարգում սա է բուժօգնություն ստանալու ճիշտ ճանապարհը:

Դա չի նշանակում, որ աշխատակիցը հետագայում սահմանափակված է միայն տվյալ պոլիկլինիկայով: Եթե անհրաժեշտ է հետազոտություն, նեղ մասնագետի խորհրդատվություն կամ այլ բուժօգնություն, համապատասխան ուղեգրով նա կարող է դիմել համապարփակ ապահովագրության շրջանակում սպասարկող բուժհաստատություններ:

Առաջնային օղակից սկսելը նաև օգնում է խուսափել անհարկի անձնական ծախսերից և ճիշտ օգտագործել ապահովագրությամբ նախատեսված հնարավորությունները:

Միաժամանակ ուզում ենք, որ աշխատակիցները հիշեն՝ եթե որևէ հարց պարզ չէ, պետք չէ ինքնուրույն փորձել կողմնորոշվել ամբողջ համակարգում: Կարող են դիմել ԶՊՄԿ հիմնադրամի առողջապահության գրասենյակ, և մենք ճիշտ կուղղորդենք:

ՍՊԻՏԱԿԱԳԼՈՒԽ ԱՆԳՂԸ՝ ԲՆՈՒԹՅԱՆ «ՍԱՆԻՏԱՐԸ»



Սպիտակագլուխ անգղը խոշոր գիշատիչ թռչուն է, որը կարևոր դեր ունի բնական էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման գործում: Իր տպավորիչ չափերով ու լայն թևերով այն հեշտությամբ ճանաչելի է երկնքում: Թռիչքի ժամանակ անգղը կարող է երկար ժամանակ սավառնել՝ օգտվելով օդի բարձրացող տաք հոսանքներից և այդպիսով մեծ տարածություններ անցնել՝ գրեթե առանց թևերը շարժելու:

Սպիտակագլուխ անգղը հիմնականում սնվում է կենդանիների դիակներով: Հենց այս պատճառով նրան հաճախ անվանում են բնության «սանիտար». հեռացնելով կենդանական մնացորդները՝ անգղներն օգնում են պահպանել շրջակա միջավայրի բնական հավասարակշռությունը և նվազեցնել հիվանդությունների տարածման վտանգը:

Երկնքում սավառնող սպիտակագլուխ անգղը ոչ միայն տպավորիչ տեսարան է, այլև առողջ էկոհամակարգի կարևոր մասնիկ:

Հայաստանում սպիտակագլուխ անգղը հանդիպում է գրեթե ամբողջ երկրի տարածքում՝ հատկապես լեռնային, ժայռոտ վայրերում և գետերի կիրճերում: Այն մեր երկրի մշտական բնակիչներից է և բնադրում է դժվարամատչելի ժայռերին: Հայաստանում վերջին գնահատումներով հաշվվում է 46–54 բնադրող զույգ: Տեսակը ներառված է ՀՀ Կարմիր գրքում և պահպանվում է օրենքով:

Լուսանկարիչ՝ Բերտա Մարտիրոսյան



Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **հանքագործ-շախմատիստի մասին**

Շախմատիստ հանքագործը

Աշխատանք, կրթություն, շախմատ: Ալեն Գևորգյանն ապագա տնտեսագետ է. սովորում է Երևանի պետական համալսարանում, բայց փորձում է բաց չթողնել նաև շախմատային մրցաշարերը: Նա շախմատի վարպետության թեկնածու է:



Շուրջ երկու տարի առաջ Ալենն աշխատանքի է ընդունվել ԶՊՄԿ-ում՝ որպես էքսկավատորի օպերատորի օգնական: Նրա գալուց հետո բաց հանքի տեղամասերից մեկում շախմատը դարձել է ընդմիջումների գլխավոր զբաղմունքը, իսկ շախմատային իրադարձությունները՝ մեխանիկ-մեքենավարների ու բանվորների սիրելի թեման:



— Շախմատով մանկուց եմ զբաղվում, որոշակի հաջողություններ ունեմ: Աշխատավայրում հիմնականում գործի վրա եմ կենտրոնացած,— ասում է Ալենը:— Բայց բոլորը գիտեն, որ շախմատիստ եմ. երեխաների հանձնարարություններն են ուղարկում, իսկ ընդմիջումներին խաղաքարերը շարած, տախտակը պատրաստ՝ ինձ են սպասում:

Մինչ վարպետները գովում են Ալենին արագ ընկալելու, աշխատանքի նկատմամբ ուշադիր լինելու և համեստության համար, նա, ի պատասխան, աշխատանքի դրական կողմերն է ներկայացնում:

— Սա այն աշխատանքն է, որը դժվար չէ համատեղել ուսման ու շախմատային կարիերայի հետ: Գրաֆիկը հստակ է, վարձատրությունը՝ բավականին բարձր: Գործընկերներս ու ղեկավարությունն էլ ամեն ինչում աջակցում են:



Շախմատի վարպետ դառնալու համար Ալենը պետք է հաջողությամբ մասնակցի մի շարք մրցաշարերի: Գործընկերները խոստանում են՝ հենց նրան են երկրպագելու և վստահ են, որ նա վերադառնալու է հաղթանակներով:

Տիգրանուհի Բադալյան



ՋՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ՓՈՐՁԱՐԿՎՈՒՄ Է ՄԱՍՆԱԿԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆՈՐ ԽՏԱՑՈՒՑԻՉԸ

Ժամանակակից արդյունաբերությունում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը ձեռնարկությունների կայունության և գործառնական անվտանգության հիմնասյունն է: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում սա ռազմավարական առաջնահերթություն է: Ընկերության հերթական խոշոր տեխնոլոգիական նախաձեռնությունն ուղղված է ջրառի կրճատմանն ու տեխնիկական ջրի փակ շրջանառության ապահովմանը: Խոսքը մասնակի շրջանառու ջրամատակարարման նոր համակարգի՝ խտացուցիչի մասին է:

Հսկա համակարգի շինարարական աշխատանքներն այս պահին ավարտական ակտիվ փուլում են: Հաշվի առնելով համակարգի մասշտաբը և բաղկացուցիչ հանգույցները՝ երբեմն անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փորձարկման աշխատանքներ՝ հնարավոր թերությունները ժամանակին բացահայտելու համար: Նախնական փորձարկումների ընթացքում նոր համակարգը լիովին արդարացրել է մասնագետների սպասելիքները և այժմ կրկնակի փորձարկման է ենթարկվում: Զուգահեռ իրականացվում են տեխնիկական հավելյալ բաղադրիչների մոնտաժման աշխատանքները: Հանգույցը վերջնական ու ամբողջական շահագործման կհանձնվի 2027 թվականի առաջին կիսամյակում:

Ամերիկյան փորձը՝ Սյունիքում

Խնդրի լուծման առաջարկը ԶՊՄԿ-ն ստացել է հանքարդյունաբերական սարքավորումների նախագծման համաշխարհային առաջատար Metso ընկերությունից: Ոլորտում որակի չափանիշ համարվող ընկերությունը նմանատիպ խտացուցիչ կառուցել էր Միացյալ Նահանգների հանքավայրերից մեկի համար:
ԶՊՄԿ-ից գործուղված մասնագետները տեղում մանրամասն ուսումնասիրել էին ԱՄՆ-ում գործող սարքավորման աշխատանքի առանձնահատկություններն ու արդյունավետությունը, որից հետո որոշում էր կայացվել նույն նախագծով և արտադրողականությամբ՝ համակարգ պատվիրել նաև ԶՊՄԿ-ի համար: Միայն խտացուցիչի արժեքը շուրջ 57 միլիոն դոլար է, իսկ ամբողջական համակարգի վրա ընկերությունը 35 միլիոն դոլար ներդրում է արել: Այս գերթանկարժեք խտացուցիչը եզակի տեխնոլոգիական նորարարություն է ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ տարածաշրջանում:

Ինչպե՞ս է աշխատում փակ ցիկլը

Մասնակի շրջանառու ջրամատակարարման նոր համակարգի ամբողջ շղթան գործում է փակ եղանակով՝ բացառելով շրջակա միջավայրի հետ շփումը: Գործընթացի հիմքում պոչանքի մեխանիկական և քիմիական արդյունավետ մշակումն է: Հարստացուցիչ ֆաբրիկայից հոսող զանգվածը հասնում է խտացուցիչ, որտեղ հատուկ պտտվող խառնիչը խտացված պոչերը կենտրոնացնում է մեջտեղում: Հատուկ միջամտության շնորհիվ ապահովվում է պինդ նյութերի արագ նստեցումը, ինչից հետո անջատված տեխնիկական ջուրը կրկին մղվում է հարստացուցիչ ֆաբրիկա:
Նոր համակարգը փորձարկումների ընթացքում վերցրել է դեպի պոչամբար ուղղվող հոսքի շուրջ 30 տոկոսը: Սա կարող է էականորեն թեթևացնել Արծվանիկի պոչամբարի ծանրաբեռնվածությունը:


Թվայնացված հեռակառավարում և 25 նոր աշխատատեղ

Բնապահպանական ու արտադրական օգուտներից բացի, նոր կայանի գործարկումը կստեղծի 25 նոր աշխատատեղ:

Ամբողջ գործընթացը հագեցած է ժամանակակից ավտոմատացման համակարգերով և ամբողջությամբ հեռակառավարվում է: Հերթապահ օպերատորները համակարգչի միջոցով 24-ժամյա ռեժիմով հետևելու են տեխնոլոգիական ամբողջ ընթացքին՝ պոչատարից մինչև խտացուցիչ և զտված ջրի վերադարձը ֆաբրիկա: Համակարգի բացարձակ անխափանությունն ապահովելու նպատակով թվային վերահսկողությանը զուգահեռ մասնագետները ժամը մեկ իրականացնելու են տեղային շրջայցեր մասնաշենքում և խտացուցիչի տարածքում:

Երաշխավորված արտադրություն՝ չոր սեզոնին

Հանքարդյունաբերության ամենախոցելի գործոններից մեկը ջրային ռեսուրսների սղությունն է: Հատկապես ձմռանն ու չոր ամիսներին բնական ջրաղբյուրների սակավությունը խոչընդոտում է արտադրական ծավալներին: Նոր խտացուցիչի շահագործումը մեղմում է այդ ռիսկը՝ ձևավորելով տեխնիկական ջրի կայուն ներքին պաշար տարվա բոլոր եղանակներին: Արդյունքում՝ ԶՊՄԿ-ն սկսում է ջրային ռեսուրսների կառավարման նոր շրջափուլ:





ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻՑ ԴԵՊԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Պատմական ակնարկ

Արհեստակցական շարժման պատմությունը սկսվել է այն ժամանակներից, երբ արդյունաբերության զարգացումն աշխատող մարդկանց առջև դրեց ոչ միայն աշխատանքի, այլև աշխատանքային պայմանների, անվտանգության, վարձատրության և իրավունքների պաշտպանության հարցերը:

Հայաստանում արհեստակցական շարժումն ունի ավելի քան մեկդարյա պատմություն: Ըստ պատմական աղբյուրների՝ առաջին արհեստակցական միավորումները ստեղծվել են 1905-1907 թվականներին: Դրանց թվում էին Ալավերդու հանքագործների արհեստակցական ընկերությունները:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արհեստակցական կազմակերպության պատմությունը սկիզբ է առնում 1952 թվականից: Ավելի քան յոթ տասնամյակի ընթացքում փոխվել են աշխատանքային պայմանները, տեխնոլոգիաներն ու ժամանակի պահանջները, սակայն անփոփոխ է մնացել հիմնական գաղափարը՝ աշխատող մարդու շահերի, արժանապատվության և անվտանգության պաշտպանությունը:

ԶՐՈՒՅՑ ԶՊՄԿ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐԹՈՒՐ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՏ:**

— Պարո՛ն Աղայան, Դուք ստանձնել եք ԶՊՄԿ արհեստակցական կազմակերպության նախագահի պաշտոնը մի կառույցում, որն ավելի քան յոթ տասնամյակի պատմություն ունի: Ի՞նչ նշանակություն ունի այդ ժառանգությունը նոր փուլի համար:

— 1952 թվականից ձևավորված փորձը մեզ համար կարևոր հիմք է: Տարիների ընթացքում ձևավորվել են ավանդույթներ, աշխատանքային մշակույթ և գործընկերային հարաբերություններ, որոնք պետք է պահպանել ու զարգացնել: Ժամանակները փոխվում են, փոխվում են նաև աշխատաշուկան, աշխատողների ակնկալիքներն ու հաղորդակցության ձևերը: Ուստի մեր խնդիրը միայն եղածը պահպանելը չէ. անհրաժեշտ է կառույցի գործունեությունը համապատասխանեցնել նաև նոր պահանջներին:

Արհեստակցական կազմակերպությունը պետք է աշխատակցի համար լինի հասանելի, լսող և գործուն կառույց: Մենք ուզում ենք, որ յուրաքանչյուր աշխատակից հստակ պատկերացնի՝ ինչ հարցերով կարող է դիմել արհեստակցական կազմակերպությանը, ինչ աշխատանք է կատարվում իր շահերը ներկայացնելու և պաշտպանելու ուղղությամբ, և ինչ արդյունքներ են արձանագրվում:

Առաջիկա ծրագրերը. ավելի բաց, ավելի հասանելի, ավելի ժամանակակից

— Պարո՛ն Աղայան, որո՞նք են առաջիկա շրջանի հիմնական ծրագրերն ու առաջնահերթությունները:

— Կարևոր ուղղություններից մեկը կազմակերպության աշխատանքի առավել համակարգված և թափանցիկ

ներկայացումն է: Նախատեսում ենք բոլոր ստորաբաժանումներում տեղադրել արհեստակցական կազմակերպության տեղեկատվական ցուցատախտակներ, ակտիվացնել տեղեկատվական աշխատանքը և առավել ակտիվ ներկայություն ապահովել սոցիալական հարթակներում:
Միաժամանակ շարունակվելու են աշխատակիցների սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ կոլեկտիվ բանակցությունները և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված որոշ աջակցությունների վերանայման վերաբերյալ քննարկումները:
Ինչպես գիտեք, կառույցում ներգրավված են ընկերության բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչները: Կարևորում ենք, որ յուրաքանչյուր աշխատակից իր ստորաբաժանման ներկայացուցչի միջոցով կարողանա բարձրաձայնել իրեն հուզող հարցերը, խնդիրներն ու առաջարկները, իսկ արհեստակցական կազմակերպությունը դառնա դրանց քննարկման և լուծումների որոնման իրական հարթակ:
Արհեստակցական կազմակերպության դերը չի սահմանափակվում միայն սոցիալական աջակցությամբ, դրամական օգնությամբ կամ հանգստի ուղեգրերի տրամադրմամբ: Դրանք կարևոր ուղղություններ են, սակայն մեր գործունեության նպատակը շատ ավելի լայն է՝ լինել աշխատակցի ձայնը, ներկայացնել նրա աշխատանքային և սոցիալական շահերը, պաշտպանել նրա իրավունքները և նպաստել այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ աշխատակիցը ոչ միայն աջակցություն է ստանում, այլև զգում է, որ իրեն լսում են, իր խնդիրներին արձագանքում են, իսկ բարձրացված հարցերը հասցվում են լուծման:
Այդ կապը պետք է լինի մշտական, հասանելի և երկկողմանի՝ աշխատակցից դեպի կառույց և կառույցից դեպի աշխատակից:

Ավանդույթները՝ պահպանել, գործելակերպը՝ թարմացնել

— Որո՞նք են այն ավանդույթները, որոնք ցանկանում եք պահպանել, և ի՞նչ նոր մոտեցումներ եք նախատեսում ներդնել:
— Կան ավանդույթներ, որոնք տարիների ընթացքում դարձել են կազմակերպության ինքնության մի մասը: Դրանց թվում են աշխատակիցների սոցիալական աջակցությունը, առողջարանային ծրագրերը, սպորտային և մշակութային միջոցառումները, ինչպես նաև համայնքի երեխաներին ուղղված նախաձեռնությունները:
Միաժամանակ ուզում ենք փոխել ոչ թե ավանդույթների բովանդակությունը, այլ դրանց կազմակերպման ու ներկայացման մշակույթը: Արհեստակցական կազմակերպության աշխատանքը պետք է ավելի տեսանելի լինի: Աշխատակիցը պետք է տեղեկացված լինի՝ ինչ որոշումներ են ընդունվում, ինչ ծրագրեր են իրականացվում, ինչ հարցերի շուրջ են ընթանում բանակցությունները և ինչ արդյունքներ են դրանք տալիս:
Այս առումով կարևորում ենք նաև հետադարձ կապը: Աշխատակցի կարծիքը պետք է ոչ միայն լսվի, այլև հաշվի առնվի հետագա քայլերը պլանավորելիս:

> «Յուրաքանչյուր քայլ, որը կարող է աշխատակցի համար ապահովել թեկուզ փոքր, բայց իրական բարելավում, պետք է դիտարկել որպես առաջընթաց»:

Աշխատանք և հանգիստ

— Առողջարանային ուղղությունը ևս երկար տարիներ եղել է արհեստակցական կազմակերպության աշխատանքի կարևոր մասը: Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում այստեղ:
— Այս պահին համագործակցում ենք հանրապետության երեք առողջարանային կենտրոնների հետ՝ Ջերմուկում, Վանաձորում և Արզնիում: Գործող գործընկերներին ներկայացրել ենք մեր պահանջներն ու առաջարկները:
Միաժամանակ ուսումնասիրում ենք այլ առողջարանների առաջարկները՝ պայմանները, ծառայությունների որակն ու հնարավորությունները: Եթե դրանք համապատասխանեն մեր պահանջներին, համագործակցության շրջանակը կընդլայնվի:
Ուղեգրերի տրամադրման ամենածանրաբեռնված ժամանակահատվածը եղել է օգոստոսը, և մեզ համար կարևոր են ծառայությունների վերաբերյալ աշխատակիցների դիտողություններն ու առաջարկները: Առողջարանային ծրագիրը պետք է գնահատվի ոչ միայն տրամադրված ուղեգրերի թվով, այլև, առաջին հերթին, աշխատակցի և նրա ընտանիքի համար ստացված իրական արդյունքով:

Գործընկերություն և երկխոսություն

— Ինչպե՞ս եք պատկերացնում հարաբերությունները ընկերության ղեկավարության և գործընկեր արհմիութենական կառույցների միջև:
— Մեր նպատակը աշխատանքային հարաբերություններում հավասարակշռություն պահպանելն է: Արհեստակցական կազմակերպությունը պետք է կարողանա ներկայացնել աշխատակիցների շահերը, բարձրաձայնել խնդիրները և միաժամանակ մասնակցել դրանց լուծման գործընթացին:
Մենք շարունակում ենք համագործակցել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, ՀՀ լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության և այլ գործընկեր կառույցների հետ:
Յուրաքանչյուր քայլ, որը կարող է աշխատակցի համար ապահովել թեկուզ փոքր, բայց իրական բարելավում, պետք է դիտարկել որպես առաջընթաց:
— Եթե մեկ նախադասությամբ ձևակերպեք այս փուլի գլխավոր նպատակը, ինչպիսի՞ն կլինի այն:
— Արհեստակցական կազմակերպությունը պետք է մնա աշխատողի կողքին՝ պաշտպանելով նրա աշխատանքային և սոցիալական շահերը, բայց միաժամանակ զարգանա որպես ժամանակակից, բաց և երկխոսության վրա հիմնված կառույց: Մեր աշխատանքի չափանիշը պետք է լինի ոչ միայն կատարված աշխատանքների քանակը, այլև այն, թե որքանով են դրանք իրական փոփոխություն և օգտակար արդյունք ստեղծում աշխատակցի ու նրա ընտանիքի համար:

Առաջիկա ծրագրերի և նոր նախաձեռնությունների մասին՝ շուտով...

Լիլիթ Իսրայելյան



Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **տեսանյութ հանքի հյուրերի մասին**

«ՀՅՈՒՐԵՐԻ ՊԱԿԱՍ ՉՈՒՆԵՆՔ»

Դիտել անվտանգության կանոնների մասին պատմող հոլովակը, հագնել անհատական պաշտպանիչ միջոցները, նոր միայն բարձրանալ բաց հանքի տարածք. սրանք կանոններ են, որոնց հետևում է ԶՊՄԿ այցելող յուրաքանչյուր հյուր: Իսկ հանքը տեսնել ցանկացողների պակաս ձեռնարկությունը չունի:



Սեպտեմբերին հսկայական մասշտաբներին ու անդադար աշխատանքին ծանոթանալու համար այցելածները հիմնականում մարզիկներ էին, ավելի ճիշտ՝ չեմպիոններ:

«Սյունիք» ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստները ներկայացել էին ամբողջ կազմով, մարզիկների մեծ մասը հանքում առաջին անգամ էր: «Սյունիք» ՖԱ-ի գլխավոր մարզիչի տեղակալ Սերգեյ Տրուհանովը բազմաթիվ հարցեր ուներ, այցն ամփոփելիս՝ կոչ արեց մարզիկներին հետևել թիվ մեկ հարկատուի օրինակին.

-Մենք սարերը դրսից էինք տեսել, այսօր տեսանք ներսից: Մեր ֆուտբոլիստների համար սա հրաշալի հնարավորություն է՝ Հայաստանն ավելի լավ ճանաչելու: Լավ է, որ տեսան, թե ինչպիսին է մեզ ֆինանսավորող ընկերությունը, այսուհետ նրանք ևս կձգտեն, ոլորտի առաջատար հովանավորի պես, առաջինը լինել դաշտում:



-Երբեք չէի պատկերացնի, որ նման հնարավորություն կունենամ, սա մեծ նվեր եմ համարում,-

ասում է 18-ամյա նիգերիացի ֆուտբոլիստ Օղենեվվեգբա Օկիկին:

Ֆուտբոլիստների այցից մի քանի օր անց ձեռնարկությունը հյուրընկալեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի չեմպիոններին: Ռոման Ամոյանին հետաքրքրել էին հսկա բեռնատարներն ու դրանք վարող մարդիկ:



-Շատ մեծ հանք ունենք, այս մարդիկ, որ վարում են այդ հսկայական մեքենաներն ու տրակտորները, հերոսներ են: Ուզում եմ բոլորն իմանան, որ Հայաստանն այսքան զարգացած հանքարդյունաբերություն ունի: Նայում էի ու զարմանում՝ ինչքան ճիշտ են արված հաշվարկները, ինչքան ուշադիր են անվտանգությանը,-

ասում է Ռոման Ամոյանը:

-Աննկարագրելի մասշտաբներ են, խենթանալու բան,-

հիացական խոսքերին շնորհակալություններ է խառնում Դավիթ Չակվետաձեն:

Չեմպիոնները համայնքի հյուրերն էին, եկել էին մասնակցելու Մանվել Փարամազյանի անվան հունահռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարին, հանք էին եկել հենց համայնքապետի հետ: Հյուրերին դիմավորել, հանքարդյունաբերական ձեռնարկության պատմությանն ու ներկայիս գործունեությանը ծանոթացրել է գլխավոր տնօրենի տեղակալ Արմեն Ստեփանյանը.

-ՋՊՄԿ-ն արդեն մի քանի տարի է գործունեությամբ և բաց դռներով ցույց է տալիս իր թափանցիկությունը,- ասում է Արմեն Ստեփանյանը:- Մենք ընդունում ենք բոլոր խմբերին՝ աշակերտներ, գիտնականներ, բժիշկներ, հասարակ քաղաքացիներ, որոնք ցանկանում են ծանոթանալ ձեռնարկության գործունեությանը: Թափանցիկ գործելաոճը մեր որդեգրած քաղաքականությունն է, որի արդյունքում մենք բարձրացնում ենք ճանաչելիությունը և պայքարում կարծրատիպերի դեմ: Այցելելով՝ մարդիկ տեսնում են, թե ինչքան լավը կարող է լինել հանքարդյունաբերությունը:

Թե՛ ըմբիշները, թե՛ ֆուտբոլիստները ևս մեկ անգամ այցելելու ցանկություն են հայտնում: ՋՊՄԿ-ից էլ հիշեցնում են՝ կարող են գալ բոլոր ցանկացողները: Պետք է դիմել, համապատասխան ընթացակարգ անցնել, ապա վայելել տասնամյակների աշխատանքի մասին պատմող տեսարաններն ու հզոր ձեռնարկության տեխնիկական մոտիկից տեսնելու հնարավորությունը:



Լեգենդար հյուրերը

Ռոման Ամոյան
Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի փոխչեմպիոն

Դավիթ Չակվետաձե
Հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն

Կարեն Մնացականյան
Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի կրկնակի չեմպիոն

Վաղինակ Գալստյան
Հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն



Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **փոշու դեմ պայքարող ջրցան տեխնիկայի վերաբերյալ**



ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՋՐՑԱՆ ՄԵՔԵՆԱ

CAT 789D AUTONOMOUS WATER TRUCK (AWT)

Ա շխարհի առաջատար ընկերությունները հանքի տարածքում փոշու ծավալի կառավարումն իրականացնում են ինքնավար եղանակով: Caterpillar-ի Cat 789D Autonomous Water Truck-ը ոչ միայն ինքնուրույն տեղաշարժվում է հանքի ճանապարհներով, այլև ավտոմատ կառավարում է ջրի մատակարարումը: Համակարգը գնահատում է երթևեկությունը, եղանակային պայմաններն ու ճանապարհի վիճակը և որոշում՝ որ հատվածում, երբ և որքան ջուր է անհրաժեշտ ցողել: Ջրի հոսքը փոխվում է նաև մեքենայի արագությանը համապատասխան՝ կանխելով ավելորդ ջրումը, սայթաքուն հատվածների առաջացումը և ջրի վատնումը:

Այս տեխնոլոգիայի կարևոր առավելությունն անվտանգությունն է: Պայթեցման աշխատանքներից հետո առաջացած փոշու կառավարման փուլում ջրցան մեքենան կարող է աշխատել ինքնավար՝ նվազեցնելով մարդու անմիջական ներկայության անհրաժեշտությունը նման իրավիճակներում: Միաժամանակ համակարգը կարող է ավտոմատ կանգնեցնել ջրամատակարարումը, երբ մեքենան դանդաղում է կամ ջրի պաշարը սպառվում է: Արդյունքում՝ ջրցանը դառնում է ոչ թե պարզապես օժանդակ մեքենա, այլ հանքի անվտանգության և փոշու կառավարման միասնական թվային համակարգի մաս:

Մոդել՝ Cat 789D Autonomous Water Truck (AWT)
Ջրի տարողությունը՝ մինչև 165,000 լիտր
Շարժիչ՝ Cat 3516C HD, 78.1 լ աշխատանքային ծավալով, 2,100 ձիաուժ համախառն հզորությամբ
Ինքնավարության ապահովումը՝
Cat MineStar Command for hauling
Ջրի կառավարման համակարգը՝
Cat Water Delivery System (WDS)

- **Ջրի հոսքը** ավտոմատ փոխվում է՝ մեքենայի արագությանը համահունչ:
  Եթե արագությունը նվազում է 4.8 կմ/ժ-ից, ջրցանն ավտոմատ դադարեցնում է ջրի մատակարարումը՝ ավելորդ ջրումից և ճանապարհի սահունությունից խուսափելու համար:
- **Բաքի լիցքավորումը** նույնպես կարող է ամբողջությամբ ավտոմատացվել. մեքենան տեղեկացնում է, թե երբ ունի լիցքավորման կարիք, և ավտոմատ անջատում է լիցքավորումը՝ գերլցման ռիսկի դեպքում:
- **Համակարգը կարող է** հեռակա վերահսկել մեքենայի տեղադրությունը, ջրի և վառելիքի մակարդակը, արագությունը, ծախսված ջրի քանակը:

ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ...

ՋՊՄԿ-Ն ՎԵՐՋԵՐՍ ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ՀԵՐԹԱԿԱՆ

KOMATSU PC 3000

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **հանքի նոր տեխնիկայի մասին պատմող տեսանյութը**

Տեխնիկական վերազինումը հանքարդյունաբերության ոլորտում միայն նոր տեխնիկայի ձեռքբերումը չէ. այն մասնագիտական բարձր պատրաստվածության, աշխատանքային անվտանգության մշակույթի և գործընթացների ճիշտ կազմակերպման համադրությունն է:

260 տոննա քաշով և 16 խորանարդ մետր շերեփի տարողությամբ հսկայի մոնտաժումից անմիջապես հետո մեկնարկել է օպերատորների ուսուցման ծրագիրը:

Մասնագետների խմբին նոր տեխնիկայի կառավարման հմտություններն ուսուցանելու նպատակով ՋՊՄԿ էր ժամանել «Komatsu Mining Germany» ընկերության օպերատորների ավագ հրահանգիչ Թովմաս Ամտագը. «Նոր մեքենայի հնարավորությունները լիարժեք օգտագործելու համար անհրաժեշտ է, որ օպերատորը ոչ միայն տիրապետի կառավարման հմտություններին, այլև հասկանա՝ ինչպես աշխատել ավելի անվտանգ և արդյունավետ»:

Ուսուցման ծրագիրը ներառել է ինչպես տեսական, այնպես էլ գործնական փուլեր:

Առաջին օրերին օպերատորները դասասենյակում ծանոթացել են PC 3000-ի տեխնիկական առանձնահատկություններին, կառուցվածքին և աշխատանքի սկզբունքներին: Այնուհետև ուսուցումը տեղափոխվել է գործնական միջավայր. սովորել են մեքենայի կառավարման առանձնահատկությունները, իրականացրել տեխնիկական վիճակի շրջայց-ստուգումներ:



«Մենք աշխատեցինք ոչ միայն մեքենան կառավարելու հմտությունների վրա, այլ նաև ուշադրություն դարձրինք մեքենայի ճիշտ դիրքավորմանը, շերեփի ավելի լավ լցմանը և յուրաքանչյուր աշխատանքային ցիկլի տևողության կրճատմանը»,– պատմում է Թովմաս Ամտագը:

Վերապատրաստմանը մասնակցել է հինգ օպերատոր: Նրանք բոլորն էլ հանքավայրում շահագործվող տեխնիկաների օպերատորներն են, ունեն համապատասխան աշխատանքային փորձ:

«Տասը օրերի ընթացքում զգալի առաջընթաց եմ նկատել: Շատ լավ աշխատեցինք միասին: Հիանալի թիմ է, հաճելի էր այստեղ գտնվելը»,- ամփոփել է Ամտագը:



Նոր տեխնիկայի ներդրման գործընթացի անմիջական մասնակիցներից է օպերատոր Դավիթ Մարտիրոսյանը, որն առաջիկայում կառավարելու է PC 3000-ը:

«Նոր տեխնիկայի վրա աշխատելու հեռանկարը ոգևորիչ է: Երբ ընկերությունում տեխնիկական վերազինում է իրականացվում, նշանակում է, որ մենք՝ որպես մասնագետներ, նույնպես պետք է զարգանանք և նոր գիտելիքներ ձեռք բերենք,– ասում է Դավիթը,– **նոր մեքենան ունի իր առանձնահատկությունները, և միայն նախկին փորձը բավարար չէ:**

Ուսուցումն այդ առումով օգտակար էր. մենք կարողացանք գործնական աշխատանքի ընթացքում տեսնել, թե ինչպես կարելի է ավելի ճիշտ կազմակերպել աշխատանքային ցիկլը»:

Լիլիթ Իսրայելյան



ԹՎԱՅԻՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ.

ինչպես է ՏՍՎ համակարգը փոխում ընկերության արտադրական առօրյան

«Վերանորոգել այն, ինչն արդեն խափանված է». այս սկզբունքը գործում է արդյունաբերական շատ կազմակերպություններում և բացառություն չէ նաև հանքարդյունաբերությունը: Ժամանակը, սակայն, ապացուցել է հակառակը. արդյունավետ է՝ երբ ոչ թե սպասում ես խափանմանը, այլ կանխում ես այն:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում մեկնարկած «Թվային հուսալիություն» նախագիծը փոխել է այս մոտեցումը. տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը (ՏՍՎ) սկսվում են ոչ թե վթարային կանգառի պահին, այլ վերածվում են կանխարգելիչ ու թվայնացված գործընթացի:

Շատ ընկերություններում, երբ աշխատակիցները լսում են թվայնացման մեծ ծրագրերի մասին, առաջին բանը որ գալիս է մտքին, եղած հաստիքների կրճատումն է: «Թվային հուսալիությունը» կադրերի կրճատման ծրագիր չէ: Ոչ մի համակարգ չի կարող վայրկյանական փոխարինել մասնագետների փորձն ու գիտելիքները: Այն տալիս է ամբողջական պատկեր՝ որտեղ կա թերություն, որ սարքավորումն է կրիտիկական, ինչ ռեսուրսներ և միջոցներ են անհրաժեշտ, և այս ամենը համակարգային տվյալների հիման վրա, որոնք հասանելի են բոլոր օգտատերերին: Վերանորոգող անձնակազմի աշխատանքի էությունը պահպանվելու է, իսկ հնարավոր կազմակերպչական փոփոխությունները կանդրադառնան գործառույթների բաշխմանն ու նոր մասնագիտացված դերերին՝ բաց և սահմանված ընթացակարգերով:

Ծրագրի մյուս նպատակը թղթաշրջանառության կրճատումն է և ցրված աղյուսակներից միասնական թվային միջավայրին անցնելը: Այսօր աշխատակիցները զգալի ժամանակ են ծախսում տեղեկությունների որոնման, հեռախոսային համաձայնեցումների և տվյալների կրկնակի մուտքագրման վրա: «1C:ТОиР» համակարգի ներդրմամբ տվյալները կուտակվելու են մեկ հարթակում:

Սա մասնագետներին թույլ է տալու՝
- արագ գտնել վերանորոգումների պատմությունը,
- ժամանակին փոխանցել թերությունների մասին տեղեկատվությունը պատասխանատուներին,
- ձևավորել առաջադրանքներն ու փաստաթղթերը էլեկտրոնային տեսքով,
- հաշվի առնել փաստացի աշխատուժի ծախսերը և արդյունքները,
- վերլուծել անսարքությունների պատճառները և վերահսկել միջոցառումների կատարումը:

Որոշումները նախկինի պես կայացնելու են մարդիկ, սակայն այժմ նրանք հենվելու են սարքավորումների վիճակի, նյութերի առկայության, անձնակազմի ծանրաբեռնվածության և ռիսկերի օբյեկտիվ գնահատման վրա, ոչ թե առաջնորդվելու են հրատապությամբ կամ խնդրի բարձրաձայնմամբ:
Նախագծի գլխավոր նպատակը վթարների կանխարգելումն է: Վթարները հիմնականում հանկարծակի չեն լինում: Դրանց նախորդում են կրկնվող անսարքություններն ու թերությունները: նախագիծը թույլ կտա ազդանշանները որսալ շատ ավելի վաղ:

Դրա համար պետք է զարգացնել հետևյալ ուղղությունները՝
- սարքավորումների տեխնիկական վիճակի հաշվառում,
- ախտորոշում և հսկողություն
- թերությունների գրանցում և վերլուծություն,
- պարապուրդների վերլուծություն,
- սարքավորումների կրիտիկականության գնահատում,
- անսարքությունների արմատական պատճառների հետաքննություն,
- հուսալիության միջոցառումների կատարման վերահսկողություն:
-

«Թվային հուսալիությունը» նոր ծրագրից զատ, պատասխանատվության և կարգապահության մշակույթ է՝ ուղղված ԶՊՄԿ-ի և անձնակազմի կայուն ապագայի ապահովմանը:

Ռոման Չուրկին - ԶՊՄԿ էներգամեխանիկական սպասարկման և վերանորոգման դեպարտամենտի ղեկավար

«Լավագույն վերանորոգումն այն է, որը ստիպված չենք եղել կատարել վթարային կարգով: Մեր նպատակն է նախապես տեսնել ռիսկերը, կանխել անսարքությունները և որոշումներ կայացնել՝ նախքան խնդիրը կկանգնեցնի արտադրությունը: Նման մոտեցումը թույլ է տալիս խնայել ժամանակը, ռեսուրսները և, ամենակարևորը, ապահովել մարդկանց անվտանգությունը»

Միասնական տվյալներ, կանխատեսելի արդյունք

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի նման մասշտաբային ընկերություններում հատկապես թղթաբանական և ՏՍՎ աշխատանքների թվայնացումից խուսափելն այսօր անհնար է. արդյունավետ աշխատանքը հարյուրավոր փոխկապակցված գործառույթների միասնություն է:

Սա արագացնում է գործընթացը, նվազեցնում՝ կարևոր տեղեկությունների կորստի հավանականությունը:


Ժամանակին համընթաց քայլելու և նորարարական գաղափաներն հօգուտ ընկերության կիրառելու հրամայականով պայմանավորված՝ ԶՊՄԿ-ում փուլ առ փուլ ձևավորվում է ձեռնարկության թվային հիմքը՝ «Մերգելյան» ծրագրի շրջանակում: Անձնական, աշխատավարձ, գնումներ ու վաճառքներ, հարկեր ու գանձապետարան, կապիտալ ծրագրեր, պահեստներ ու արտադրության կառավարում. բոլոր այս օղակները կապակցվում են մեկ ինտեգրված միջավայրում՝ ERP (Enterprise Resource Planning) համակարգում: Պարզ ասած՝ ERP-ն կազմակերպության թվային ուղեղն է, որը տեսնում է ամեն ինչ՝ նյութի պահանջարկից մինչև գնում, պահեստավորում, արտադրական վերամշակում, վճարում և ֆինանսական վերջնական արդյունք:

Օրինակ՝ հաճախ պայմանագրի և դրան հաջորդող վճարման կապը վերահսկվում է ձեռքով, ինչը մեծացնում է սխալների և տեղեկատվությունների արտահոսքի ռիսկը: ERP-ն իրար է կապում պայմանագիրը, պատվերը, հաշվապահական գրանցումը և փաստացի վճարումը:

Արտադրության և վաճառքների օղակում համակարգը վերացնում է տեղեկատվական խզումները: Նոր մոդելով գնանշումները ներբեռնվում են ավտոմատ՝ ապահովելով գնի ճշգրիտ հաշվարկ և պատրաստի արտադրանքի հետագծելիություն: Իսկ ֆինանսական հատվածում հարկային և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) հաշվառումները իրականացվում են միաժամանակ՝ սկզբնական փաստաթղթից մինչև վերջնական հաշվետվություն հասնող հետագծելիությամբ:

Ինչ է տալիս այս ամենը շարքային աշխատակցին և ամբողջ ձեռնարկությանը

- Աշխատակիցն ազատվում է անվերջանալի ձեռքով աշխատանքից, Excel-ի ցրված աղյուսակներից, թղթային քաշքշուկից և տվյալների կրկնակի մուտքագրումից: Աշխատանքային գործընթացները դառնում են կանխատեսելի, կարգավիճակները՝ տեսանելի, իսկ մասնագետը ժամանակ է շահում իր բուն պարտականությունների, վերլուծության և արտադրական խնդիրների լուծման համար:
- Ղեկավարները հնարավորություն են ստանում որոշումներ կայացնել ոչ թե ըստ խնդրի հրատապության կամ ենթադրությունների, այլ հիմնվելով համակարգում արտացոլված օբյեկտիվ իրականության, ռիսկերի և առաջնահերթությունների վրա:
- Ապահովվում է ռեսուրսների ճշգրիտ պլանավորում, իրացվելիության օպերատիվ կառավարում, կապիտալ ծախսերի վերահսկողություն, վթարների ու պարապուրդների կանխարգելում և բիզնեսի մրցունակության որակական աճ:





ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՏ ԳՏՆՎԵԼՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հանքային տեխնիկայից պահպանեք անվտանգ հեռավորություն՝ առնվազն տվյալ տեխնիկայի չափի եռապատիկը՝ միջինը 30 մ: Բացահանքի ճանապարհներին տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն արագությունը 35 կմ/ժ է՝ միայն բարենպաստ եղանակային և բավարար տեսանելիության պայմաններում: Տրանսպորտային միջոց վարելիս արգելվում է գերազանցել սահմանված արագությունը:

Ձայնային և լուսային ազդանշաններ

Տեսադաշտից դուրս գտնվող սարքավորումների գործարկումից առաջ պետք է տրվի առնվազն 10 վայրկյան տևողությամբ նախազգուշական ձայնային ազդանշան: Առաջին ազդանշանից հետո անհրաժեշտ է պահպանել առնվազն 30 վայրկյան դադար, որից հետո պետք է տրվի երկրորդ՝ 30 վայրկյան տևողությամբ ազդանշանը:
Բոլոր աշխատողները պետք է ծանոթ լինեն սահմանված ազդանշանների նշանակությանը: Ազդանշանների աղյուսակը պետք է փակցված լինի համապատասխան մեխանիզմի կամ սարքավորման վրա կամ դրա անմիջական մոտակայքում:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

- ✕ անցնել աշխատող սարքավորումների պաշտպանիչ ճաղաշարքից այն կողմ,
- ✕ մոտենալ աշխատող մեխանիզմներին և մեքենասարքավորումների պտտվող կամ շարժվող մասերին,
- ✕ մեխանիզմների և սարքավորումների աշխատանքի ընթացքում իրականացնել վերանորոգման կամ սպասարկման աշխատանքներ,
- ✕ գտնվել աշխատող ամբարձիչ մեխանիզմների կամ բարձրացվող բեռի տակ,
- ✕ տրանսպորտային միջոց վարելիս գերազանցել սահմանված թույլատրելի արագությունը,
- ✕ մոտենալ կամ դիպչել էլեկտրական լարերին և էլեկտրասարքավորումներին,
- ✕ օգտագործել բաց, վնասված կամ ոչ պատշաճ մեկուսացված էլեկտրական լարերով սարքավորումներ,
- ✕ իրականացնել էլեկտրասարքավորումների վերանորոգում՝ առանց դրանք հոսանքազրկելու:

ՀԻՇԵ՛Ք

Մեքենամեխանիզմների և տրանսպորտային միջոցների աշխատանքային գոտում մշտապես պահպանեք անվտանգ հեռավորություն, հետևեք նախազգուշական ազդանշաններին և մի՛ մտեք տեխնիկայի հնարավոր շարժման կամ սահմանափակ տեսանելիության գոտի:
Մեքենայի, մեխանիզմի կամ տրանսպորտային միջոցի գործարկումն սկսելուց առաջ պատասխանատու աշխատողը պարտավոր է համոզվել, որ աշխատանքային գոտում մարդկանց համար վտանգ չկա, և տալ սահմանված նախազգուշական ազդանշանը:
Անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր է բոլոր աշխատողների համար:

Համարի լուսանկարները՝
Նվեր Ջելյայի

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
www.zcmc.am
press@zcmc.am